ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյանի թ/ֆ, 055542050 , shahumyanitf@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2015 թվականի N 41

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԼԱՆՅԱՆ ՀԱՅԿ
2. ԳԱԼՈՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԴԱՆԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՅԱՅԼՈՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՅԱՅԼՈՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Շահումյանի թ/ֆ գյուղական համայնքի

ավագանու 2015 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 41 որոշման

1. Օրակարգը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների 2016 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին
3. Շահումյանի թ/ֆ համայնքի բնակչի համար գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին

Շահումյանի թ/ֆ գյուղապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ղասաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյանի թ/Ֆ, 055542050 , shahumyanitf@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2015 թվականի N 42-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2016 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԼԱՆՅԱՆ ՀԱՅԿ
2. ԳԱԼՈՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԴԱՆԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՅԱՅԼՈՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՅԱՅԼՈՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի
ավագանու 2015 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 42-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների հիմնական օբյեկտների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամ:

2.Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 / մեկ հազար/ դրամ.

2) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 500/ հինգ հարյուր / դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, այն

համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:
4. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/ դրամ:
5. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝
1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ.
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 / մեկ հազար հինգ հարյուր / դրամ:
6. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.
2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:
7. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50.000 /հիսուն հազար/ դրամ:
8. Համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
1) առևտրի օբյեկտների համար՝ 35 000 /երեսունհինգ հազար / դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.
3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /հարյուր հազար/ դրամ:
9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար / դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ:
10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:
11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար /դրամ:
12. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 1000 /մեկ հազար/ դրամ:
13. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և

այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

14. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ:

Շահումյանի թ/ֆ գյուղապետարանի
աշխատակազմի քարտուղար Լ. Ղասաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյանի թ/Ֆ
Հեռ.՝ 055542050
Էլ. փոստ՝ shahumyanitf@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 նոյեմբերի 2015 թվականի N 43

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փսփսխություններ և լրացումներ կատարելու մասին » օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ 1-ին կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Զիջել Շահումյանի թ/Ֆ համայնքի երկու բնակիչների պատկանող անձնական ավտոմեքենաների գույքահարկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԼԱՆՅԱՆ ՀԱՅԿ
2. ԳԱԼՈՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԴԱՆԵԼՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՅԱՅԼՈՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՅԱՅԼՈՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Շահումյանի թ/ֆ գյուղական համայնքի
ավագանու 2015 թվականի նոյեմբերի 20-ի
թիվ 43 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

N	Ազգանուն, անուն	Ավտոմեքենայի մակնիշը	Ավտոմեքենայի պետհամարանիշը	Սահմանված արտոնության գումարի չափը (հազար դրամ)
1.	Համբարձումյան Ռուբիկ	VAZ 21 102	24 OL 575	8100
2.	Աբգարյան Աշոտ	ՎԱԶ 21 063	12 OL 801	6900

Շահումյանի թ/ֆ գյուղապետարանի
Աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ղասաբյան